

Աստղիկ Մարտիրոսյան (Հայաստան)

Կոմիտասի թանգարան–ինստիտուտ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

DOI: 10.52853/kmi-2021-v.z-04

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՄԻ ԵՐԳԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ.

«ՃԵՄՈՒՄ ԷՒ ԲՈՒՐԱՍՏԱՆՈՒՄ»

ԱՆՏԻՊ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ

Նախաբան

Կոմիտասի թողած կոմպոզիտորական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում իր իսկ ստեղծած մեղեդիներով երգերն ու ռոմանսները: Այս գործերը մեղեդիական նկարագրի առումով ժողովրդական կամ սկզբնական երաժշտական այլ նյութից անկախ են: Սրանց շարքերում հանդիպում ենք ինչպես վաղ՝ բեռլինյան ուսումնառական տարիներին, այնպես էլ հասուն ստեղծագործական շրջանում գրված գործեր: Դրանցից առավել հայտնի են «Մայրենի լեզու»¹, «Գիշերերգ»², «Ձայն տուր, ղվ ծովակ»³, «Պանծա,

¹ «Մայրենի լեզու», Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, (այսուհետ՝ ԿԵԺ), հատ. 4, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Հայաստան», 1976, էջ 19–21: Խոսք՝ Ստեփանոս Նազարյանի: Կոմիտասն այն երգի է վերածել 1894–1895 թթ.: Տե՛ս նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 165:

² «Գիշերերգ», ԿԵԺ, հատ. 5, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Սովետական գրող», 1979, էջ 30–31: Բեռլինյան շրջանում գրված գործերից է, նույն՝ 1899 թ. գրված թղթերում հանդիպում ենք երկու լեզուներով՝ ռուսերեն և գերմաներեն: Ռուսերենի հիմքում Յ. Վ. Ֆոն Գյոթեի «Wandrer's Nachtlied II» բանաստեղծության՝ Մ. Լերմոնտովի ազատ թարգմանությունն է, որը Կոմիտասն իր հերթին վերածել է գերմաներենի և ըստ դրա ստեղծել երգի երկրորդ տարբերակը: Տե՛ս նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 163–169:

³ «Ձայն տուր, ղվ ծովակ», ԿԵԺ, հատ. 4, էջ 137–139: Խոսք՝ Րաֆֆու: Երգի ինքնագիր, մաքրագրված տարբերակի տիտղոսաթերթին հեղինակը գրել է՝ «Նվեր շնորհալի օրիորդ Մարգարիտ Բաբայանին. Կոմիտաս Վարդապետ, Ս. Էջմիածին, 1901, նոյեմբեր 12»: Տե՛ս նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 194:

դու հայ միություն»⁴, «Մուֆն էր երկինքը»⁵, «Սիրո ծագումն ուրկից է»⁶ (ա կապելլա) երգերը, սրանց կողքին՝ նաև կոմպոզիտորի սեփական մեղեդիական նյութի վրա հիմնված «Մի գեղեցիկ պարզ գիշեր էր»⁷, «Առ գետս Բաբելացոց»⁸, «Գարուն»⁹ խմբերգերը, ինչպես նաև մանուկների համար գրված «Կաքավի երգը»¹⁰, «Փայտե ձիուկ»¹¹,

⁴ «Պանծա, դու հայ միություն», ԿԵԺ, հատ. 4, էջ 85–87: Խոսք՝ Կոմիտասի: Կոչվում է նաև «Քայլերգ Հայկական բարեգործական ընդհանուր միության»: Գրվել է հավանաբար 1912–1914 թթ.: Տեն նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 187–189:

⁵ «Մուֆն էր երկինքը», ԿԵԺ, հատ. 5, էջ 27–29: Խոսք՝ Հ. Թումանյանի: Երգի տարեթիվը Կոմիտասի ձեռագրում նշված չէ: Ըստ Ռ. Աթայանի՝ այն գրվել է 1904–1905 թթ.: Տեն նույն տեղում, ծանոթագրություններ, էջ 163:

⁶ «Սիրո ծագումն ուրկից է», ԿԵԺ, հատ. 5, էջ 32: Խոսք՝ Վ. Շեքսպիրի, թարգմ.՝ Հ. Մասեհյանի: Ըստ Ռ. Աթայանի՝ գրված է 1901–1905 թթ., ամենայն հավանականությամբ՝ սկզբնական տարիներին: Տեն նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 169–170:

⁷ «Մի գեղեցիկ պարզ գիշեր էր», ԿԵԺ, հատ. 4, էջ 50: Խմբերգ կանացի երգչախմբի համար: Խոսք՝ հավանաբար Հակոբ Սարգսյանի: Գրվել է 1897–1898 թթ.: Տեն նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 174:

⁸ «Առ գետս Բաբելացոց», ԿԵԺ, հատ. 4, էջ 39–46: Խմբերգ երկսեռ երգչախմբի համար: Տեքստը՝ Աստվածաշնչից, Դավթի 137–րդ սաղմոս, գրված է գերմաներեն թարգմանության ավանդական տեքստով (արծակ), ըստ Աթայանի՝ հավանաբար 1896 թ.: Տեն նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 168:

⁹ «Գարուն» («Ու՛ր ես գալի, այ գարուն»), ԿԵԺ, հատ. 2, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Հայաստան», 1965, էջ 141–145: Խոսք՝ Հովի. Հովհաննիսյանի, 1900–1905 թթ.: Խմբերգ երկսեռ երգչախմբի համար: Տեն նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 277:

¹⁰ «Կաքավի երգը», ԿԵԺ, հատ. 1, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 72–74: Խոսք՝ ժողովրդական, մշակել է Հ. Թումանյանը: Հրատ. 1908 թ.: Տեն Ծանոթագրություններ, էջ 174–175:

¹¹ «Փայտե ձիուկ», ԿԵԺ, հատ. 5, էջ 81: Խոսք՝ Կոմիտասի, հրատ. 1964: Այս և նշված մյուս մանկական երգրի առնչությամբ Ռ. Աթայանը գրում է. «Ըստ երևույթին Կոմիտասը հորինում էր և խոսքը, և մեղեդին, գրում նվագակցությանը և առանց նվագակցության երգեր», տեն նույն տեղում, էջ 17, նաև Ծանոթագրություններ, էջ 203–204:

«Օր, օր»¹², «Ճուտիկներն ու մանկիկը»¹³, «Հայր մեր»¹⁴... երգերն ու խմբերգերը:

Բեռլինյան տարիներին ուսումնառական նպատակով գրված ռոմանսներն ու երգերը, որոնք, ինչպես նշում է անվանի երաժշտագետ, կոմիտասագետ, Կոմիտասի երկերի խմբագիր Ռոբերտ Աթայանը՝ «...մեծ մասամբ գերմաներեն խոսքերով են, հադկապես հայ երաժշտական լեզվով չեն գրված, դրանցում ընդհանրապես ռճական անհատականությունը պակաս է»¹⁵: Հայերեն բնագրով գրված հեղինակային երգերից որոշները հարում են հայ քաղաքային–ժողովրդական մեղեդիական ոճին (օրինակ՝ «Մայրենի լեզու», «Պանծա, դու հայ միություն»): Աթայանը սրանց առիթով նշում է, որ «երբեմն էլ պարունակում են ակնհայտ «եվրոպեիզմներ»¹⁶: Իսկ առավել հասուն շրջանի երգերն աչքի են ընկնում հայ ազգային դպրոցին բնորոշ, հեղինակի անհատական, ակներև ձեռագրով («Մութն էր երկինքը», «Սիրո ծագումն ուրկից է»...):

Ուսումնասիրությունների ընթացքում Վարդապետի արխիվում հայտնաբերեցինք ձեռագիր՝ մատիտագիր մի երգ–ռոմանս՝ գրված հայ անվանի բանաստեղծ, գրող Հովհաննես Հովհաննի-

¹² «Օր, օր», ԿԵԺ, հատ. 5, էջ 142, խոսք՝ Կոմիտասի, 1916: Տե՛ս նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 203–204:

¹³ «Ճուտիկներն ու մանկիկը», ԿԵԺ, հատ. 5, էջ 143–147, խոսք՝ Կոմիտասի: Ուշ շրջանի գործերից է: Սա և մյուս մանկական երգերը, բացի «Օր, օր»–ից, Կոմիտասը գրել է թափանցիկ թերթերի վրա: Տե՛ս նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 203–204:

¹⁴ «Հայր մեր», ԿԵԺ, հատ. 5, էջ 148, խոսք՝ Կոմիտասի: Մանկական աղոթք–երգ: Տե՛ս նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 203–204, 1915 թ., Կ.Պոլիս, հուլիս 12:

¹⁵ Տե՛ս, ԿԵԺ, հատ. 5, էջ 163–164: Կոմիտասի բեռլինյան տարիներին գրված երգերից տե՛ս **Տաթևիկ Շախկուլյանի** «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891–1899)» գրքում, Երևան, «Ամրոց գրուպ», 2014, էջ 140–176:

¹⁶ Տե՛ս ԿԵԺ, հատ. 5, էջ 19:

սյանի¹⁷ (1864–1929) «Ճեմում էի բուրաստանում» բանաստեղծության հիման վրա: Հովհաննիսյանն այն գրել է 1888 թ. հունիսի 16–ին, 24 տարեկանում¹⁸: Ըստ ինքնագրի վրա նշված տվյալների՝ բանաստեղծությունը Կոմիտասը երգի է վերածել 1910 թ. փետրվարի 16–ին Էջմիածնում՝ բանաստեղծության ստեղծումից 22 տարի անց:

Թեև մատիտագիրը բավականին բաց է և որոշ հատվածներում հազիվ ընթեռնելի, այդուհանդերձ փորձել ենք հնարավորինս վերականգնել այն: Ձեռագիրն առավել ևս հետաքրքիր է, քանի որ ընդգրկում է Կոմիտաս–կոմպոզիտորի հասուն ստեղծագործական շրջանը: Ինչպե՞ս է գրվել այս ռոմանսը, վստա՞հ ենք, որ ձեռագրի հեղինակը Կոմիտասն է, ի՞նչ երաժշտական նկարագիր ունի, ինչքանով է հարում Կոմիտասի՝ ուշ շրջանում գրված մյուս գործերի ընդհանուր նկարագրին, հնարավոր է այն ներմուծել կատարողական երկացանկ. այս հարցերն են դրված սույն հոդվածի առանցքում:

¹⁷ Հովհաննես Հովհաննիսյանը գրական աշխարհում ասպարեզ եկավ և ճանաչում ձեռք բերեց 23 տարեկանում՝ 1887 թ. ընկերների կողմից թաքուն հրատարակած բանաստեղծությունների ժողովածուով: Ծնվել է Վաղարշապատում (Էջմիածին) 1864 թ.: 1877 թ. սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որտեղ ուսանել է բանաստեղծ Սմբատ Շահագիզի մոտ: Այստեղ առիթ է ունեցել շփվելու ժամանակի մեծանուն դեմքերի հետ, ծանոթացել Իվան Տուրգենևի, Ֆյոդոր Դոստոևսկու և այլոց հետ: Ճեմարանն ավարտելուց հետո ընդունվել է Մոսկվայի համալսարանի պատմա–բանասիրական ֆակուլտետը: Հայրենիք վերադառնալուց հետո զբաղվել է ստեղծագործական և մանկավարժական գործունեությամբ, դասավանդել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Գրել է բանաստեղծություններ, պոեմներ, կատարել մի շարք թարգմանություններ և փոխադրություններ այլազգի անվանի հեղինակների գործերից: Առավել հայտնի են գրողի «Վահագնի ծնունդը», «Արտավազը» բանաստեղծությունները: Մահացել է 1929 թ.: Տե՛ս **Հովհաննես Հովհաննիսյան, Երկեր**, միհատորյակ, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 3–14:

¹⁸ Տե՛ս **Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու**, 1964 թ., Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., հատոր 2, էջ 17:

«Ճեմում էի բուրաստանում» երգի նկարագիրը

Ճեռագիրը գտանք Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԶԱԳԱԹ) Կոմիտասի ֆոնդի 495–րդ ծրարում: Բնագիրը չխմբագրված և դժվար ընթեռնելի, սևագիր, խունացած վիճակում է: Խոսքերն ամբողջությամբ գրված են, հեղինակի կողմից վերնագիր նշված չէ, կատարման բնույթը նշող տերմիններ չկան, փոխարենը երկու տեղ հանդիպում ենք հայերեն դժվարընթեռնելի ցուցումների: Ստորագրված է: Վերջինիս հետ կապված, այլ աղիթով Ռ. Աթայանը գրում է *«Ի դեպ, ասենք, որ իր գործերում երաժշտության հեղինակի անունը Կոմիտասը նշել է այն բացառիկ դեպքերում միայն, երբ մաքուր արտագրված նոտաները հափկացված են եղել տպագրության ներկայացնելու կամ որևէ մեկին նվիրելու»*¹⁹: Այս դեպքում բացառության ենք հանդիպում: Երգի սկզբում թեև սղագիր, բայց տիպիկ կոմիտասյան ձեռագրով գրված է՝ *«բանաստեղծությունը՝ Հովհ. Հովհաննիսյանի, երաժշտությունը՝ Կոմիտասի»*:

Ստորև՝ բնագրի առաջին էջի լուսանկարը:

Դատելով ձեռագրի սղագիր, ասես հապճեպ գրված վիճակից և ամսաթվից (փետրվարի 26), կարելի է ենթադրել, որ այն գրվել է մեկ օրում կամ մի երեկոյի ընթացքում: Տպավորություն է, որ Կոմիտասը հապճեպ փորձել է թղթին հանձնել մտքին եկածը, որ հետագայում աշխատի մանրամասնորեն: Հնարավոր է նույնիսկ, որ գործը գրվել է տեքստի հեղինակի՝ Հովհաննես Հովհաննիսյանի տանը՝ էջմիածնում, որտեղ այժմ գործում է գրողի տուն–թանգարանը:

¹⁹ Տես Կեժ, հատ. 5, էջ 164:

Handwritten musical score for a song, featuring multiple staves with musical notation and lyrics in Armenian. The score is written on aged paper and includes various musical symbols, notes, and rests. The lyrics are written in Armenian script below the staves. The title at the top is "Աստղիկ Մարտիրոսյան (Հայաստան) Կոմիտասյան մի երգի հայտնություն." (Astghik Martirosyan (Armenia) Komitasian mi ergi haytunutyoun).

Handwritten notes at the top right include: "համար 100" (number 100) and "1910 թվական" (year 1910).

The score consists of several systems of staves, each containing musical notation and corresponding lyrics. The notation includes various musical symbols, notes, and rests, indicating a complex melodic structure. The lyrics are written in Armenian script, and the overall style is characteristic of early 20th-century handwritten musical notation.

Իսկ ի՞նչ առնչություն ունեին Կոմիտասը և բանաստեղծը:

Հայտնի է, որ Հ. Հովհաննիսյանը, որը Կոմիտասի դասախոսներից էր (ճեմարանում դասավանդում էր ռուսաց լեզու և գրականություն), հետագայում դառնում է նրա գործընկերը և ամենամտերիմ մարդկանցից մեկը²⁰: Գիտենք, որ Կոմիտասը հաճախ էր հյուրընկալվում գրողի տանը: Բացի նշված բանաստեղծությունից՝ Կոմիտասը Հովհաննիսյանի խոսքերով գրել է ևս մի քանի վոկալ ստեղծագործություն («Տանդո», «Նազլու, վեր կաց», «Գարուն» խմբերգեր, ժողովրդական մոտիվներով բանաստեղծի մշակած «Ալազյազ բարձր սարին»–ը և այլն)²¹:

Հովհաննիսյանի «Ճեմում էի բուրաստանում» բանաստեղծությունը, որը բաղկացած է երեք քառատողից, երգում ամբողջությամբ առկա է: Տեքստը հետևյալն է.

*Ճեմում էի բուրաստանում,
Առավոտ էր մայիսյան,–
Ինդում էի, զվարճանում,
Ուրախալից բնության:*

*Անհոգ խաղով ես մոլորեցա
Քնքուշ բացված ալ վարդին,
Անուշ հոտից չկշտացա,
Զմայլեցա ալ վարդին:*

²⁰ Այս առիթով Աթայանը գրում է. «...Գևորգյան ճեմարանում ուսանելիս Պուշկինն ու Լերմոնովովը եղել են Կոմիտասի սիրած բանաստեղծներից, և այդ սերը, ամենայն հավանականությամբ, նրանում պարզաստել է նրա մերձավորագույն բարեկամ և ուսուցիչ Հովհ. Հովհաննիսյանը»: Տե՛ս ԿԵԺ, հատ. 5, էջ 166:

²¹ Ի դեպ, Հովհաննես Հովհաննիսյանի տուն–թանգարանը զարդարում է Կոմիտասին և գրողին պատկերող մի կտավ, որտեղ նրանք գտնվում են Հովհաննիսյանի նույն տան պատշգամբում: Կտավի հեղինակ՝ Սարգիս Մուրադյան, 1957 թ., ք. Էջմիածին, Հ. Հովհաննիսյանի տուն–թանգարան:

*Մեկ էլ տեսա՝ մալրադ կուրծքին
Ձազիր որդն էր բույն դրել.–
Վայ նազելի իմ ալ վարդին,
Կյանքի թելն էր կտրվել²²:*

Բնագրային օրինակում երգը ծավալվում է 28 տակտում: Մեր խմբագրած օրինակի վերջում լրացրել ենք ևս երկու տակտ՝ նույնությամբ կրկնելով երգի 24–25–րդ տակտերը, քանի որ բանաստեղծական նախավերջին տողը (*Վայ նազելի իմ ալ վարդին*) որպես երգի ավարտուն կտոր կրկնվում է երկու անգամ, ինչին հաջորդում է վերջին տողը (*Կյանքի թելն էր կտրվել*): Այս ֆրագը (վերջին երկու տողերը միասին) նույն կերպ կրկնվում է երկրորդ անգամ: Կոմիտասը, նույնությամբ գրելով նախավերջին տողը, վերջին՝ 28–րդ տակտում լիզայի նշանը հնգագծերից դուրս հանելով ասես նշում է դեպի վերջին տողը, որն ըստ տրամաբանության պիտի ևս կրկնվի, ինչը և արել ենք: Իսկ ինչու՞ հեղինակն ինքը նշված տակտերը չի ավելացրել: Գուցե այն պարզ պատճառով, որ նոտային թղթի վերջին հատվածին էր արդեն հասել, և հնարավոր է, որ այդ պահին միայն երկու էջ նոտային թուղթ ուներ ձեռքի տակ:

Ուրեմն կարող ենք ասել, որ երեք տներից բաղկացած վոկալ բաժնեմասը, ինչպես արդեն նշեցինք, ամբողջական է: Մեղեդուն բնորոշ է հանդարտ, խոհական, ասերգային բնույթը: Դաշնամուրային նվագակցության նվագամասը առկա է միայն հատվածաբար: Առավել լիարժեք են թվում առաջին 6 տակտերը: Դրանք ավարտուն կարող ենք համարել որոշակի վերապահումներով: Օրինակ, վիճելի կարող են համարվել սկզբնական տակտերում նվագակցության մեջ միջին ձայնային գծի հնչյուններից որոշները, որոնք դժվար ընթեռնելի են: Որոշ տակտերում (7–րդ, 11–րդ, 17–րդ, 18–րդ, 21–րդ և 23–րդ) առ-

²² Նշելի է, որ երգում բանաստեղծական տեքստը Կոմիտասը գրել է իրեն բնորոշ դասական ուղղագրությամբ:

կա են բասային, հիմնականում ծայնառության դեր կատարող պահված հնչյունները, որոնք թեև հիմք են թվում, բայց և այնպես թերի են առանց մյուս ծայների: Թվով հինգ տակտերում նվագակցությունն առհասարակ բացակայում է (12–16–րդ): Վերջին նշված տակտերում հանդիպում ենք նոտաների կամ ակորդների տառային նշումների: Վիճելի է, թե դրանցից որոնք է հեղինակը նշել որպես հնչյուն և որոնք որպես նույն տառով նշվող ակորդ: Օրինակ՝ 11–րդ և 12–րդ տակտերում լատինատառ D–ն պիտի հասկանալ «ռե», թե որպես դոմինանտային՝ հինգերորդ աստիճանի ակորդ: Որպես «ռե» հնչյուն ներդաշնակ չի հնչում վոկալի հետ, իսկ որպես դոմինանտային ակորդ ինչ կերպ էր այն դասավորելու հեղինակը, գրելու էր տեղեկային տոնի բացթողնմամբ, թե՛ իր ակորդային տրամաբանության համար սովորական դարձած կվինտային տոնի ընդգծումով, դրա լուծումը կառաջացներ եվրոպական արվեստին հատուկ դարձվածքաբանություն, թե՛ այն կտարրալուծվեր իր հարմոնիկ շարադրանքում... Այս նրբությունները հաշվի առնելով՝ դրանք նվագակցության մեջ չենք լրացրել:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ որոշ տողերում հանդիպում ենք հայկական նոտագրությամբ սղագրված հատվածների: Սա, իհարկե, նորություն չէր Կոմիտասի ձեռագրերում: Ինչպես գիտենք, Կոմիտասն աշխատանքային գործընթացում բազմիցս համադրել է եվրոպական և հայկական նոտագրությունները: Վերջինս հաճախ և դարձյալ սղագրման համար էր կիրառում: Վերջնական փուլում նախընտրեցինք դրանք ևս չարտացոլել մեր խմբագրության մեջ մի քանի պատճառով: Առաջին՝ մատիտաներկի բաց լինելու պատճառով լիարժեք չեն երևում տևողության նշանները: Երկրորդ՝ գրված են տողերի արանքներում և հասկանալի չէ, թե դրանք որ ծայնաբաժնի համար են մտածված: Այս հատվածները թվում են մեղեդուց անկախ փոքրիկ դարձվածքներ և վիճելի է, թե դրանք գրվել են հայկական նոտագրության փուլը հավաստեցնելով եվրոպականի «ռե»–ին, թե՛

«դո»–ին²³: Բացի դրանից՝ հայկական նոտագրությամբ հատվածները հանդիպում ենք առավելապես առաջին վեց տակտերում, որոնք, ինչպես նշել ենք, եվրոպական նոտագրությամբ ևս լրացված են:

Հատկանշական է, որ սույն երկին անդրադարձել է նաև Ռ. Աթայանը Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակության 5–րդ հատորի առաջաբանում՝ ցուցադրելով երգի միայն մեղեդային բաժնեմասից համեմատաբար ավարտուն կտոր՝ սկզբից մինչև 25–րդ տակտերը՝ բաց թողնելով գրված վերջին երեք տակտերը, որոնք, ինչպես վերը նշեցինք, մեղեդային առումով կրկնվող հատվածներ են²⁴: Աշխատանքի ընթացքում պարտադիր համարեցինք մեղեդու մեր խմբագրությունը համեմատել նաև Աթայանի հրատարակության հետ: Որոշ դժվարընթեռնելի նոտաների դեպքում հիմք ենք ընդունել Աթայանի նշումները: Համամիտ չենք Աթայանի կազմած տարբերակում միայն մեկ նոտայի հետ. 10–րդ տակտ, «ես» բառին համապատասխանող հնչյունը ոչ թե «ռե» է, այլ «մի»:

Աթայանն այս երկն անվանում է ռոմանս: Վստահաբար այն կարող ենք համարել ռոմանսային ժանրի գործ՝ նկատի ունենալով գոնե մի քանի հանգամանք: Նախ, չնայած բանաստեղծության քառյակային կառուցվածքին, մեղեդիական մարմնացումը տներում քառյակային կառուցվածքին բնորոշ նույնական կրկնություն չունի: Բանաստեղծական տեքստի մեջ նկատելի է հոգեբանական խորացում, իսկ նվագակցությունը սոսկ ընկերակցություն չէ վոկալ գծին, այն հագեցնում և խորացնում է դրա հոգեբանական–գեղարվեստական նկարագիրը: Ինչպես գիտենք, նշված կետերը բնորոշ են հենց ռոմանսի ժանրին: Ի դեպ, Աթայանը նշում է, որ ռոմանսի ժանրը, ըստ երևույթին, վաղուց է գրավել Կոմիտասին, և նրա մի շարք երգերում («Մութ գիշերվա մեջ», «Ախ, մարալ ջան», «Լորիկ», «Զուլո», «Ձայն

²³ Այդուհանդերձ, կարող ենք փաստել, որ Կոմիտասի՝ հայկական նոտագրությամբ մի շարք ձեռագրերում գործում է փուլը «ռե»–ին հավասարեցնելու սկզբունքը:

²⁴ Տե՛ս ԿԵԺ, հատ. 5, էջ 16:

տուր, ղվ ծովակ») նկատում է ռոմանսային ժանրի գծեր, իսկ «Գիշերերգ» և «Մութն էր երկինքը» գործերը համարում ռոմանսային ժանրի տիպական նմուշներ²⁵:

Ռոմանսի նվագակցության մեջ, թեև ոչ ամբողջությամբ, սակայն նկատելի են մաժորա–մինորային համակարգի ներդաշնակման որոշ տարրեր (A–dur, fis–moll): Ինչպես հանդիպում ենք Կոմիտասի հասում շրջանի երկերում, բանալու նշանները դնելիս հեղինակը հիմնականում առաջնորդվում է ոչ թե մաժորա–մինորային լադային կառուցվածքով, այլ երգի (հատկապես ժողովրդական) լադային կառուցվածքով, ուստի բանալու մոտ երբեմն միաժամանակ կարող ենք հանդիպել դիեզի և բեմոլի (օր.՝ «Քելեր, ցոլեր» երգում): Այս ռոմանսում բանալու մոտ հանդիպում ենք երեք դիեզի: Լյա մաժորում հնչող լուսավոր ու անհոգ սկիզբը ուղիղ համեմատական է երգի տեքստի սկզբնական տողերի բնույթին (*Ճեմում էի բուրաստանում, առավոտ էր մայիսյան...*): 17–րդ տակտից սկսած զգալի են մինորային, տազնապային ինտոնացիաները՝ տեքստին համահունչ (*...մեկ էլ քեսա մաքաղ կուրծքին զազիր որդն էլ բուն դրել...*): Ռոմանսի եզրափակիչ տակտերում և հատկապես վերջին երկու տակտերում ձայնառության նման երկար պահված «լյա»–ն որոշակիորեն խոսում է դեպի մաժոր վերադարձի մասին, սակայն նվագակցության բացը մեզ թույլ չի տալիս հստակ տեսակետ ունենալ այստեղ ևս: Պետք է ասել նաև, որ առհասարակ հասուն շրջանի գործերում Կոմիտասը չէր առաջնորդվում մաժորա–մինորային լադային սկզբունքով: Սա ավելի հատուկ է նրա վաղ շրջանի գործերին: Հիշենք, որ այս գործը գրվել է 1910–ին: Այս առումով կարելի է որոշակի հակասություն տեսնել այստեղ: Այդուհանդերձ, վերջնական դատել, ասելով, որ սա գրվել է մաժորամինորային սկզբունքի հիման վրա, ճիշտ չենք համարում՝ նկատի ունենալով վերը նշված նվագակցության բաժնեմասի բացերը:

²⁵ Նույն տեղում, էջ 14–15:

Համեմատություն Կոմիտասի ռոմանսային ժանրի այլ գործերի հետ

Համեմատելով Կոմիտասի ռոմանսային ժանրի մյուս գործերի հետ՝ «Ճեմում էի բուրաստանում» ռոմանսն իր խոհական, ասերգային բնույթով, երաժշտական-ինտոնացիոն առումով, որոշակիորեն նվագակցության ֆակտուրայով և կառուցվածքով առավել մոտ և համեմատելի ենք համարում Կոմիտասի հասուն շրջանում գրված «Մութն էր երկինքը» (1904-1905 թթ., խոսք՝ Հ. Թումանյանի) ռոմանսի հետ, որը գրվել է նշված գործից շուրջ հինգ տարի առաջ: Նույն տեսակետը հանդիպում ենք Կոմիտասի երկերի ժողովածուի 5-րդ հատորի առաջաբանում, Ռ. Աթայանի մոտ: Ավելին, Աթայանը նշում է, որ «Մութն էր երկինքը» ռոմանսում Կոմիտասը ստեղծել է «ազգային խոսակցական ու երաժշտական արտասանական ինքնատիպ ինտոնացիաներ, որոնք այն ժամանակ հայ երաժշտության մեջ միանգամայն նորություն էին... Այդպիսի ինտոնացիաների արտահայտչական ողջ «արդյունավետությունը» պարզ զգացվում է նաև Կոմիտասի՝ ավելի ուշ, 1910 թ. հորինված... «Ճեմում էի բուրաստանում» ռոմանսում: Դժբախտաբար, այս վերջինի նվագակցությունը լրիվ գրված դեռ չի հաջողվել հայտնաբերել, ուստի ռոմանսը հատրում չի կարող զետեղվել»²⁶:

Եզրակացություններ

Ի մի բերելով հոդվածի սկզբում առաջադրված հարցերը և թեմայի նպատակը՝ կարող ենք փաստել, որ ռոմանսը պատկանում է Կոմիտասի գրչին, գրվել է ստեղծագործական հասուն շրջանում (1910, փետրվարի 26), և չնայած անավարտ կամ մասամբ մշակված լինելու հանգամանքին՝ կարող ենք նշել, որ ձեռագրի տեսան-

²⁶ Կեժ, հատ. 5, էջ 15:

կյունից որոշ վերապահումներով, այդուհանդերձ, հարում է կոմիտասյան հասուն շրջանի գործերի ընդհանուր նկարագրին: Թեև հասկանալի է, որ պայմանավորված նվագակցության մեջ պակասող տակտերի հանգամանքով՝ դժվար թե կարելի լինի ռոմանսը ներմուծել կատարողական երկացանկ, այդուհանդերձ, որպես անտիպ ստեղծագործության վերականգնման փորձ, գոնե գիտական հրատարակությամբ միանգամայն արժան ենք համարում լուսաբանման:

Որպես ամփոփում՝ փաստենք նաև, որ իհարկե, հայ իրականության մեջ դասական ռոմանսի ժանրը հաստատապես կայացած իրողություն դարձավ Ռոմանոս Մելիքյանի շնորհիվ, որին և համարում ենք հայ դասական ռոմանսի հիմնադիրը: Այդուհանդերձ կարող ենք նշել նաև, որ Կոմիտասը, ինչպես նաև այլ կոմպոզիտորներ՝ սկսած Տիգրան Չուխաճյանից մինչև Ռոմանոս Մելիքյան, այս և վերը նշված ռոմանսային ժանրի մյուս գործերով նախապատրաստեցին ժանրի ներմուծումը հայ իրականություն:

Հավելվածում ներկայացված է «Ճեմում էի բուրաստանում» ռոմանսի՝ մեր վերականգնած տարբերակը:

ՃԵՄՈՒՄ ԷՒ ԲՈՒՐԱՍՏԱՆՈՒՄ

Բանաստեղծությունը՝ Զովհաննես Զովհաննիսյանի
Երաժշտությունը՝ Կոմիտասի
1910. փետրվար 16
Ա. Էջմիածին

ՃԵ -

մում է - ի բու-րաս-տա-նում,

Ա-ռա-ւօտ էր մա-յի- սեան, հըն

2

7

դուս_____ է - ի, զը-վար-ճա-նում, Ու-րա-խա-կից բը-նու-

9

թեան:_____ Ան-հոգ խա-ղով_____ ես մօ - տե - ցա_____ Քըն-

11

բոյշ_____ բա - ցուած_ ալ_____ վար - դին, Ա -

13

3

նուշ հո - տից չը կըշ տա - ցա, ըզ-մայ - լե -

15

ցա ալ վար - դին: Մեկ էլ տե-սա՝ մա-տաղ կուրծքին Ձա-գիր որ-

19

դըն էր բուն դը - թել. վա՛յ

4

21

նա - զե-լի իմ ալ_վար- դիև, վա՛յ_ նա - զե

23

լի իմ ալ_վար-դիև, Կյան - քի թելև եր_ կը - տը -

25

րուել:_ վա՛յ_ նա - զե-լի իմ ալ վար -

27 5

դիև, վա՛յ — նա - գե - լի իմ ալ - վար - դիև, Կյան - քի

29

թելև էր — կը - տը - թուել: —

Ամփոփում

Կոմիտասի պահպանված երաժշտական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կոմպոզիտորի ստեղծած մեղեդիներով երգերը: Վարդապետի արխիվում հայտնաբերեցինք մատիտագիր երգի ձեռագիր՝ գրված հայ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի (1864–1929) «Ճեմում էի բուրաստանում» (1888 թ.) բանաստեղծության հիման վրա: Բանաստեղծությունը Կոմիտասը երգի է վերածել Էջմիածնում, 1910 թ.: Այս առումով ձեռագիրն առավել հետաքրքիր է, քանի որ արտացոլում է Կոմիտաս–կոմպոզիտորի հասուն ստեղծագործական շրջանը: Երեք տներից բաղկացած՝ ասերգային բնույթի երգի մեղեդին ամբողջական է, իսկ նվագակցության բաժնեմասը, որը հագեցած է հայկական նոտագրության սղագիր հատվածներով, առկա է միայն հատվածաբար:

Հոդվածում հեղինակը ներկայացնում է մինչ օրս ամբողջությամբ չիրապարակված այս նյութը, այն համեմատում Կոմիտասի հասուն ստեղծագործական շրջանի մյուս ստեղծագործությունների, մասնավորաբար երգերի հետ, լուսաբանում ձեռագիրը, այսպիսով շրջանառության մեջ դնելով կոմիտասյան ձեռագրի ևս մի թանկարժեք պատառիկ:

Հիմնաբառեր՝ Կոմիտաս, Հովհաննես Հովհաննիսյան, «Ճեմում էի բուրաստանում», ռոմանս, երգ:

Astghik Martirosyan (*Armenia*)

Komitas Museum–Institute

Komitas State Conservatory of Yerevan

DISCOVERY OF A SONG BY KOMITAS: AN ATTEMPT OF RESTORATION OF UNPUBLISHED WORK “I WAS STROLLING IN THE ORCHARD”

Abstract

Songs with his own melodies have a special place in the musical heritage left behind by Komitas. In Vardapet’s archive, I found a handwritten song, based on the poem “I Was Strolling in the Orchard” (1888) by Armenian poet Hovhannes Hovhannisyan (1864–1929). According to my data, Komitas turned the poem into a song in Ejmiatsin in 1910. In this sense, the writing is even more interesting because it includes the matured stage of Komitas as a composer. The melody of the song which consists of three verses and has a recitative style, is written completely; and the part of the piano accompaniment which is full of transcripts with Armenian notation is available fragmentarily only.

The purpose of this paper is to present the song that has not been published in its entirety, as well as to compare it to other works from Komitas’s mature creative phase, especially his songs, and to cover the manuscript and its uniqueness, thus putting into circulation this precious piece of Komitas’s manuscript.

Keywords: Komitas, Hovhannes Hovhannisyan, “I Was Strolling in the Orchard”, romance, song.